

ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԵՎ ՍԱՍՏԿԱԿԱՆ ԲԱՅՆՐԻ ՎԻՃԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Հ. Գ. ՀԱԿՈՐՅԱՆ

Քննարկման նյութ դարձնելով ժամանակակից արևելահայ դրական լեզվի բազմապատկական և սաստկական ածանցների ու դրանցով կազմվող բայերի ձևակազմության և գործածության վիճակագրության հարցերը, հետապնդում ենք մեկ հիմնական նպատակ. կոնկրետ տվյալներով ցույց տալ բազմապատկական և սաստկական բայակազմության ծավալայնության չափն ու կշռությամբ արդի դրական հայերենում: Մեզ հետաքրքրում են բազմապատկական և սաստկական բայածանցների ձևակազմական (բանի ածանց, քանի բայ) և համապատասխան բայածների ընդհանուր գործածության հարաբերական հաճախականությունները:

Լեզվի վիճակագրական ուսումնասիրության ամենաառաջին պահանջից ելնելով, մենք ևս վերցրել ենք մի որոշ ծավալի բառաքանակություն: Բազմապատկական և սաստկական բայերի հաճախականության քննությունը կատարված է սովետահայ տասնութ հեղինակների ստեղծագործություններից քաղված ավելի քան երկու հարյուր հազար բառ պարունակող ընդհանուր ծավալ ունեցող տեքստ-ընտրանքի վրա: Վիճակագրության մեջ ընդունված է ընտրանքի ծավալը պայմանականորեն նշանակել Ո-ով, իսկ որևէ երևույթի հարաբերական հաճախականությունը՝ Ո-ով: Մեր Ո-ը հավասար է 200000 բառի, իսկ Ծ-ի համար օգտագործում ենք երկու նշանակում՝ Բբ (բս—բազմապատկական և սաստկական ածանցների ձևակազմական հաճախականությունը) և Ո (հարաբերական հաճախականությունը):

Կարող է հարց առաջանալ, թե ինչու ընտրանքը փաստորեն արտացոլում է միայն սովետահայ գեղարվեստական գրականության, մասնավորապես՝ արձակի լեզուն, անտես առնելով դրական լեզվի նաև մի շարք այլ դրսևորումները: Միանգամից ասենք, որ ընդհանրապես գեղարվեստական արձակի լեզուն անհամեմատ ավելի ճշգրիտ է ներկայացնում դրական որևէ լեզվի վիճակը: Հայոց լեզուն այս իմաստով բացառություն չի կազմում: Մեր ընտրանքի բնույթը որոշելիս ելել ենք նաև հանրահայտ այն փաստից, որ բազմապատկական և սաստկական ածանցավոր բայածներ ունեցող լեզուների ճնշող մեծամասնությունում այդ բայերը հիմնականում բնորոշվում են գործածության ոլորտների տեղայնացմամբ ու սահմանափակումներով²: Բազմապատկական և սաստկական կամ զորացման բայերի գործածության հնարավորությունները արդի հայերենում նախ և առաջ բնութագրվում են, այսպես ասած, ոճական հատկանշանակությամբ, այսինքն՝ այդ բայածները խոսքին (գրավոր և բանավոր) հաղորդում են ոճական որոշակի երանդ, տրամադրություն, անհատական վերաբերմունք, գործողության կամ եղելության «զգայական» բնութագրման շեշտվածություն, ճշտում են սուբյեկտ-օբյեկտ փոխադարձ կամ միակողմանի հարաբերության ոլորտում իրականացող գործողության որոշ մանրամասները և այլն՝ պարզ և ածանցավոր կամ կրկնավոր զուգակից կամ ոչ զուգակից ձևերում ունենալով ու գերազանցապես լավ պահպանելով

¹ Այս հոդվածի նպատակներից դուրս է ընդհանրապես բնութագրել բազմապատկական բայերը գործողության կամ եղելության կրկնություն արտահայտող իրենց տարբեր երանգներով ու հարաբերություններով, ինչպես նաև տալ սաստկական բայերի սահմանումը: Միայն ասենք, որ հայոց լեզվի բազմապատկական և սաստկական բայերը, հիմնականում ունենալով ձևաքանական միևնույն ցուցիչները, իրենց իմաստային որոշ դրսևորումներով երբեմն այնքան են իրար նման, որ դժվար է լինում դրանք սահմանադատել: Բազմապատկականությունը սովորաբար իր մեջ պարունակում է նաև սաստկության ու զորացման գաղափար (հմմտ. կոխկրտել, ճխլտել, պոկրտել և այլն): Այս է պատճառը, որ բազմապատկական-կրկնողական կերպի հետ հաճախ իրավացիորեն միացվում է նաև սաստկության իմաստը, որի երանգներից մեկն էլ գործողության սաստկական կրկնությունն է (հմմտ. պոկոտել-պոկրտել, կոխոտել-կոխկրտել և զնդրտալ, դիկրտալ և այլն):

² Տե՛ս «Вестник Московского университета», сер. X. Филология, 1966, № 1, էջ 55—58:

իմաստային տարբերակումներ³, իսկ խոսողի կողմից գործողության կամ էղելության նկատմամբ դրսևորվող նման վերաբերմունքը առավել ցայտուն արտահայտվում է գեղարվեստական դրականության լեզվի մեջ: Գրական լեզվի դրսևորման այլևայլ ոլորտներում՝ ոճերում (գիտական, հրապարակախոսական, պաշտոնական և այլն), բազմապատկական և սաստկական բայաձևերը, օգտագործման «անհրաժեշտության» պակասի պատճառով, այնքան են սակավադեպ, որ վիճակագրության համար գործնական արժեք չեն ներկայացնում:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ գեղարվեստական խոսքի մեջ բազմապատկական և սաստկական բայաձևերի գործածությունն ու տեղայնացումը սերտորեն կապված են ստեղծագործության ժանրային, թեմատիկ և ոճական առանձնահատկությունների հետ: Այս կապվածությունը շատ լավ զգացվում է, ասենք, առանձին արձակագիրների մոտ: Սա անշուշտ հեղինակային անհատական գրելաձևի և լեզվանյութի ընտրության նախասիրությունների հարց է: Նման բայերի գործածությունը, մեծ մասամբ պայմանավորված լինելով գեղարվեստական խոսքի ոճավորման հանդամանքով, հեղինակից հեղինակ, թեմայից թեմա, նույնիսկ նույն հեղինակի սույն ստեղծագործության ընտրանքից ընտրանք տարբեր աստիճանների հաճախականություն կարող է ունենալ⁴: Բնորոշ է, օրինակ, այն, որ մեր վերցրած արձակագիրներից Ն. Հարյանը, Ս. Խանդադյանը, Աղավնին, Գ. Սևունցը համեմատաբար շատ են գործածում բազմապատկական և սաստկական բայաձևեր, մինչդեռ Ստ. Զորյանի, Գ. Մահարու, Ա. Սեկոյանի մոտ դրանք սակավադեպ են (հոգվածը չժանրաբեռնելու համար վիճակագրական տվյալներ չենք բերում):

Այժմ ներկայացնենք սովետահայ գեղարվեստական գրականության լեզվում բազմապատկական և սաստկական բայաձևերի վիճակագրության մի քանի տվյալներ, որոնք եթե ոչ բացարձակ ճշտությամբ, գոնե ճշտության ձգտող մոտավորությամբ (հարաբերականորեն շատ ավելի մոտ իրականվիճակին) պարզ պատկերացում են տալիս քերականական այդ կարգերի ծավալայնության չափերի մասին ընդհանրապես ժամանակակից դրական հայերենում: Նշեցինք, որ սովետահայ տասնութ հեղինակներից վերցված տեքստ-ընտրանքի մեջ մտնող բառերի ընդհանուր թիվը 200000 է: Այս ընտրանքի մեջ հանդիպում են բազմապատկական և սաստկական 58 տարբեր բայեր

(Բբ — $\frac{58}{200000}$): Սրանց ընդհանուր գործածության հաճախականությունը միևնույն

ընտրանքում կազմում է 175 բառ ($n = \frac{175}{200000}$): Գործածված 58 ածանցավոր բայաձևերի

կազմությանը մասնակցել են 16 պարզ և բաղադրյալ ածանցներ՝ -ոտ-, -ոտ- // -րտ-, -տ- (>-թ-), -ատ-, -կտ-, -կոտ- // -կրտ-, -ստ-, -ատալ-, -կալ-, -կուտ-, -լտ-, -որ-, -կ-, -ո-, -շտ- և -թկ- (<-տկ-): Սրանց ձևակազմական հաճախականությունը (Բբ) և յուրաքանչյուր ածանցով կազմված բայերի ընդհանուր գործածությունը մեր ընտրանքում ցույց տալու համար բերենք մի աղյուսակ (№ 1), որո կազմված է ըստ ածանցների նվազող հաճախականության:

Աղյուսակից պարզ երևում է, որ բազմապատկական և սաստկական ածանցները ժամանակակից գրական հայերենում ունեն ձևակազմական տարբերակվածություն⁵ և տարածում: Աղյուսակի տվյալները թեև սահմանափակված են մեր ընտրանքով, սակայն հիմնականում ճիշտ են արտացոլում հայոց լեզվի բայակազմության այս մեկ բնագավառի արդի իրական վիճակը: Ընտրանքում հանդիպում են գրեթե այն բոլոր ածանցները (ձևույթները), որոնք ժամանակակից հայերենի համար առանձնացվում են իրենց գործողության կամ էղելության բազմապատկական և սաստկական քերականական իմաստների ձևաբանական ցուցիչներ: Աղյուսակի I և II սյունակների քննությունը ցույց է տալիս, որ բազմապատկական և սաստկական բայակազմությունը (I) ու տարբեր այդ բայերի ընդհանուր գործածությունը (II) սովետահայ գեղարվեստական արձակ լեզվում ամբողջության մեջ բավական շոշափելի են, որը նշան է լեզվական ինքնուրույն ու ինքնատիպ այդ էրևույթի տարածվածության արդի գրական հայերենում: Պարզ է, որ այստեղ խոսքը վերաբերում է երևույթի տարածվածության միջին և ևստիճանին կամ դրությանը, որովհետև նույն

³ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1-ին, Երևան, 1962, էջ 273--274:

⁴ Այսպես օրինակ, Գ. Սևունցի «ԹԼՀրան» վեպի առաջին գրքից վերցված 11000 բառ պարունակող ընտրանքում հանդիպում են ածանցավոր 9 տարբեր բայեր, որոնց գործածությունների ընդհանուր հաճախականությունը հավասար է 21-ի, իսկ երկրորդ գրքում՝ 3 տարբեր բայեր՝ գործածված 4 անգամ (ընտրանքն է 10500 բառ):

⁵ Խոսքն այստեղ չի վերաբերում նոր բայեր կազմելուն, այլ միայն արդեն պատրաստի ձևերին, որոնք ըստ ածանցների բաշխման իրարից շատ են տարբեր:

ծավալի մեկ ուրիշ ընտրանքի դեպքում վիճակը կարող էր փոքր-ինչ այլ լինել, սակայն մեր ստացած վիճակագրական տվյալներից ոչ շատ հնոու նկատի ունենալով քննվող բայերի վիճակագրական ընդհանուր պատկերը, կարելի է ասել, որ ժամանակակից հայերենում գործածվող բազմապատկական և սաստկական բայերի թիվն այսօրվա դրությամբ այլևս անբավարար ու խիստ սակավ հայտարարել չենք կարող: Իհարկե, ածանցավոր բայատիպարների կողքին, կրկնվող գործողությունն այլևայլ երանգների արտահայտության համար, արդի գրական հայերենում շատ ավելի տարածված են կրկնավոր բայերը: Այսպես օրինակ, մեր ընտրանքում հանդիպում են 40 միայն բնաձայնական տարրեր կրկնավորներ, որոնց ընդհանուր գործածությունը (p) հավասար է $\frac{102}{200000}$ -ի, իսկ այն կրկնավորները, որոնց պարզ նախատիպերը գործածական են, ներկայացնում են 27 տարրեր բայեր, որոնց ընդհանուր գործածությունը կազմում է՝ $n = \frac{119}{200000}$:

Աղյուսակ 1

ածանց	բայածանցների ձևակազմական հաճախականությունը (p _բ) I	գործածության հարարերական հաճախականությունը (p) II	ընտրանքի ընդհանուր ծավալը (N)
-ոտ-	14	27	200000
-ոտ- -րո-	9	39	»
-տ-(>-թ-)	6	23	»
-ատ-	4	15	»
-կլտ-	3	27	»
-կոտ- -կրտ-	3	4	»
-ստ-	3	4	»
-ատակ-	2	11	»
-կտ-	2	7	»
-կոտ-	2	6	»
-լտ-	2	3	»
-որ-	2	2	»
-կ-	2	2	»
-ռ-	2	2	»
-շտ-	1	2	»
-թկ-(<-տկ)-	1	1	»

Հետաքրքրական է առանձին բայածների գործածության հաճախականությունը մեր վերցրած ընտրանքում: Շատ սովորական բայեր հանդիպում են ընդամենը մեկ անգամ (կծոտել, գրտել, խոցոտել, կոխոտել, կտրտել, կոխկրտել՝ $p = \frac{1}{200000}$ և այլն): Մեկ անգամ հանդիպող մի քանի այլ բայատիպարներ ունեն բացահայտ բարբառային-ծողովորդական երանգ (հմմտ. խորլտալ, նմլրկալ, լփոտել, լկրտվել, ծմլկոտալ՝ $p = \frac{3}{200000}$)։ Վերջիններիս գործածության հանգամանքը պայմանավորված է գեղարվեստական խոսքի ոճավորման առանձնահատկություններով: Սրանք, իհարկե, գրական լեզվի ձևեր չեն, սակայն ըստ հարկի գործածվելիս երբեմն կարող են այդ աստիճանին բարձրանալ: Բայց դա բոլորովին այլ հարց է:

Մեր ընտրանքում առավել հաճախականությամբ հանդես են եկել հետևյալ բայերը. քպրտալ՝ $\frac{14}{200000}$, բոցկլտալ՝ $\frac{12}{200000}$, նանկլոտել՝ $\frac{12}{200000}$, փայլատալել՝ $\frac{9}{200000}$, կայծկլտալ՝ $\frac{8}{200000}$, հեծկլտալ՝ $\frac{7}{200000}$, կուտրտել՝ $\frac{7}{200000}$, կրնտել՝ $\frac{6}{200000}$, կրտրտել, բռչկոտել, բզկտել, ցատկլոտել՝ $\frac{5}{200000}$:

Այսպիսով, բերված այս բայերի ինչպես նաև մյուսների հարարերական հաճախականությունը վերցված ընտրանքում բնավ էլ նվազ չէ, եթե նկատի ունենանք այն կարևոր հանգամանքը, որ բաղմապատկական և սաստկական բայատիպարների կիրառությունը ոչ թե քերականական անհրաժեշտության գործոնով է թելադրված, այլ գերազանցապես պայմանավորված է գեղարվեստական խոսքի բնույթով, հեղինակային լեզվի ոճական հատկանշականությամբ և ստեղծագործողի նախասիրություններով:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում բազմապատկական և սաստկական բայերի հաճախականության պատկերն ավելի ամրոգացնելու առումով հետաքրքրական է վիճակագրական տվյալների համեմատությունը գրաբարի հետ՝ Հայտնի է, որ գրաբարում թվով քիչ են ինչպես բազմապատկական և սաստկական ածանցները, այնպես էլ դրանցով կազմվող բայերը։ Ուստի գրաբարի համար վերցրել ենք ավելի քան 100000 բառանոց ծավալով ընտրանք, որ քաղել ենք տասնմեկ հեղինակների գործերից։ Իսկ արդի գրական հայերենի համար սովետահայ շորս հեղինակների՝ գործերից ընտրել ենք մոտ 45000 բառածավալ ունեցող տեքստ։ Մեր այս երկու ընտրանքների սահմաններում էլ հասկանալիորեն տարբեր է միևնույն ընտրանքի մեջ մտնող տարբեր հեղինակների մոտ հանդիպող բազմապատկական և սաստկական բայերի կազմության ու գործածության հարաբերական հաճախականությունը (p_բ և p)։ Սակայն տարբերությունը զգալիորեն մեծանում է, երբ համեմատում ենք գրաբարի և ժամանակակից գրական հայերենի ընտրանքների մեջ մտնող հեղինակներին (համառ. Եղիշե՝ ուս. = $\frac{2}{11880}$ և p = $\frac{5}{11880}$,
 Ղևոնդ՝ p_բ = $\frac{1}{10500}$ և p = $\frac{2}{10500}$ և Գ. Սևունց, գիրք I՝ p_բ = $\frac{9}{11000}$ և p = $\frac{21}{11000}$,
 Ս. Պանդազյան՝ p_բ = $\frac{14}{11200}$ և p = $\frac{17}{11200}$ և այլն)։ Գրաբարի և արդի հայերենի՝ վերցված ընտրանքներում հանդիպող բազմապատկական և սաստկական բայերի հարաբերական հաճախականությունը ցուցադրելու նպատակով բերում ենք մի աղյուսակ (Խ 2), որ կազմված է ըստ -ատ-, -ոտ-, -տ- և -ատակ- ածանցների ձևակազմական բաշխման։ Աղյուսակում նշվում են միայն այն ածանցները, որոնք այսօր էլ ընդհանուր են և՛ գրաբարի, և՛ ժամանակակից գրական հայերենի համար։

Աղյուսակ 2

ածանց	-ատ-			-ոտ-			-տ- (> -թ-)			-ատակ-		
	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես	Իսկապես
Բայերի անգամ և հանգիստի ընտրանքում	(n = 100000)											
	1	—	4	12	12	—	—	—	—	—	—	3
Բայերի անգամ և հանգիստի ընտրանքում	(n = 45000)											
	—	1	—	1	—	1	1	1	1	1	1	3

6 Համեմատության համար վերցված ընտրանքների մոտավոր ծավալը որոշելիս առաջնորդվել ենք վիճակագրության այն հայտնի սկզբունքով, ըստ որի, որքան նվազ է տվյալ երևույթի հաճախականությունը, այնքան ավելի մեծ պետք է լինի ընտրանքի ծավալը, որի դեպքում ստացված արդյունքները հարաբերականորեն ավելի հավաստի են։ Եվ ընդհանրապես (տե՛ս Р. М. Фрумкина, Статистические методы изучения лексики, М., 1964, էջ 90)։

7 Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Ն. Զարյան, Հացավան։ Ս. Պանդազյան, Քաջարան։ Գ. Սևունց, Թեհրան, գիրք I։

-կրտ-ով, -ոտ-ով, -լտ-ով, -շտ-ով, -կտ-ով և -ստ-ով՝ $\frac{1}{45000}$ և $\frac{1}{45000}$ (այսինքն՝ մե-

կական բայ մեկ անգամ գործածված)։ Այս սրանց ավելացնենք նաև -ատ-, -ոտ-, -տ- և -ատակ-
ածանցները, ապա պատկերն ավելի ամբողջական կդառնա։

Վիճակագրական տվյալները թույլ են տալիս բնութագրելու բազմապատկական և սաստկական
բայակազմության վիճակը գրաբարում և արդի գրական հայերենում։ Կոնկրետ ընտրանքների
համեմատությունը փաստերով արդեն հաստատում է հայ քերականագիտության մեջ նկատված
այն իրողությունը, որ, իրոք, գործողության կամ եղելության կրկնության ու սաստկության զա-
նազան երանգներ արտահայտող բազմապատկական և սաստկական բայաձևերը գրաբարում ունեն
գործածության համեմատաբար ավելի սահմանավակ ոլորտ կամ նվազ հաճախականություն։
Գրաբարում սակավ են ինչպես այդ բայաձևերը, այնպես էլ բազմապատկական և սաստկական
բայածանցները։ Հետազոտվող ընտրանքները բավարար հստակությամբ պարզում են, որ բազ-
մապատկության երևույթը արդի հայերենում գրաբարի համեմատությամբ և՛ քանակապես (ա-
ծանցների և բայաձևերի շատություն), և՛ որակապես (բազմապատկական և սաստկական բայերի
կերպիմաստային երանգների ֆունկցիոնալ ավելի լայն օգտագործում), երկու կարևորագույն-
մակարդակներում՝ ձևաբանական և իմաստաբանական, իր համեմատաբար բարձր հաճախ-
ականությամբ զգալիորեն տարբերվում է գրաբարից և արտահայտչական հնարավորությունների
տեսակետից շատ ավելի ընդարձակ է։

Սակայն գրաբարի և ժամանակակից գրական արևելահայերենի բազմապատկական և սաստ-
կական բայակազմությունը համեմատելիս հարկավոր է նկատի ունենալ շատ կարևոր մի հան-
գամանք, որը, անկասկած, լրիվ հնարավորություն չի տալիս առավել ճշգրտորեն ներկայացնելու
գրաբարյան վիճակը։ Կասկածից վեր է, որ հայոց լեզվում բազմապատկական և սաստկական
ձևակազմությունը իր իմաստային բազմերանգներով հիմնականում ավելի ժողովրդական-խոսակ-
ցական երևույթ է՝ և, քանակաբար, հայ հին մատենագրության մեջ կարող էր ունենալ միայն
մասնակի դրսևորումներ։ Հայտնի է, որ հնում մեր պատմագրությունը զերծ չի եղել գեղարվես-
տական տարրերից, այնպես որ միանգամայն բացառված չէին բազմապատկական և սաստկական
բայաձևերի գործածության պայմանները։ Նկատի ունենալով այս վիճակը, գերադասել ենք վերց-
նել զուտ պատմագրական բնույթի աշխատանքներ, քան դիմել ավելի ուշ շրջանում՝ միջնադարում
ստեղծված գեղարվեստական երկերի օգնությանը, որոնց լեզուն արդեն մաքուր գրաբար չէ։ Նշենք
նաև, որ գեղարվեստական տեքստերը, գրաբարյան մատենագրության համեմատ, մեզ հետաքրքրող
բայերի գործածության հարցում մի առանձին տարբերություններ չեն ցուցաբերում։

Միևնույն լեզվի գրավոր երկու արտահայտություններին էլ հատուկ քերականական նույն
իրողության համեմատության համար վերցրել ենք բոլորովին տարբեր բնույթի ընտրանքներ՝
պատմագրական և գեղարվեստական, որը օբյեկտիվորեն ազդելով հանդերձ վիճակագրական տրվ-
յալների կայունության վրա, այնուամենայնիվ, կարող է օգնել գրաբարի և արդի հայերենի բազ-
մապատկական և սաստկական բայակազմության մեջ եղած տարբերությունների ցուցադրմանը⁹։
Սակայն այդ չի նշանակում, թե մեր ցույց տված տարբերությունները, նույնիսկ համարելով
համեմատելիներ ռեալիտեի դեպքում, կարող էին շատ աննշան լինել կամ ուղղակի չլինել։ Բազ-
մապատկական և սաստկական բայակազմության այդ տարբերությունները պետք է լինեին, որով-
հետև պատմական անժխտելի ճշմարտություն է այն, որ արդի հայերենի և գրաբարի կապը միջ-
նորգավորված է միջին հայերենով ու բազմաթիվ բարբառներով, իսկ սրանցից հատկապես վեր-
ջինները անշափ հարուստ են այդ բայաձևերով։

Վիճակագրական վերլուծության հետևանքով ստացված վերոհիշյալ տվյալները մեզ թույլ են
տալիս կասկածի ենթարկելու այն քերականագիտության մեջ հայտնված այն կարծիքը, ըստ որի

9 Տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջ-
նադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 197։ Ա. Ղ ա զ ա ր յ ա ն, Միջին հայերեն, գիրք Ա,
Երևան, 1960, էջ 56։

10 Զմոռանանք, որ պայմանականորեն տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված տարբեր-
ժանրերի երկերի լեզվական-վիճակագրական ցուցանիշների համեմատության ժամանակ անշափ
գծվար է պարզել, թե վիճակների զանազանությունը ինչի արդյունք է՝ ժանրային տարբերություն-
ների, թե՛ ժամանակների։ Նման դեպքերում հարաբերականորեն բավարար պետք է համարվեն
նաև այն արդյունքները, որոնք ստացվում են այլ սրնույթ ընտրանքների համեմատության համար
մեր գործադրած մեթոդի օգնությամբ։

ժամանակակից «Հայերենի բայը համարյա կորցրել է իր կերպի խոսքի մասային կատեգորիան, որը նրա մոտ մնում է իբրև կերպի մնացորդը»¹¹։ Իր շատ արժեքավոր մենագրության «Բայի կերպը» բաժնում դոցենտ Հ. Բարսեղյանը մասնավորապես կանգ է առնում կերպի այն հասկացության վրա, «որը առանձնահատուկ է բայի ոչ թե դիմորոշ ձևին, այլ բային ընդհանրապես, այսինքն բայի համար խոսքի մասային քերականական կատեգորիա է»։ Հայերենի քիչ թե շատ ճանաչելի և միակ կերպը, գրում է հեղինակը, բազմապատկական կամ կրկնողական կերպն է, որ հանդես է դալիս որոշ թվով բայերի մեջ և քերականական իր հասկացության համար ունի համապատասխան ձևաբանական արտահայտություն (բազմապատկական բայածանցներ և բայամատների կրկնություն)։ Ժամանակակից հայերենի բայի խոսքի մասային հենց այս կերպն էլ հեղինակը համարում է կերպի մնացորդ¹²։ Այս կարծիքը մեզ թվում է ոչ այնքան հիմնավոր ու համոզիչ, նախ՝ որպեսզի արդի հայերենում դիտվի բազմապատկական կերպի մնացորդ, ապա քնականաբար լեզվի զարգացման նախորդ որևէ վուում այդ երևույթն անպայման պետք է որ ունենար համեմատաբար լայն ընդգրկում (հմտ. աննախդիր բազմապատկական բայերը ռուսերենում)։ Կամ, որպեսզի հայոց լեզվի բայը, թեկուզ և համարյա, կորցնեք կերպի խոսքի մասային կարգը, ապա պետք է որ ունեցած լինեք քերականական այդ կատեգորիայի ավելի ամբողջական արտահայտություն։ Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ նման վիճակ բազմապատկական կերպը մեզանում չի ունեցել։ Եվ եթե այդ կորուստն ու մնացորդը այս կամ այն չափով կապվում են (թեև Հ. Բարսեղյանը նման բան չի ակնարկում) ընդհանրապես հնդեվրոպական բայի մեջ կերպային իմաստի նախնական գերակշռության հարցի հետ, ապա ավելի քնական կլինեք դրանց մասին խոսել գրաբարի և որոշ բարբառների բայի կապակցությամբ։ Հեղինակի կարծիքին գրեթե չի օգնում նաև այն հանգամանքը (այս մասին ևս Հ. Բարսեղյանը ոչինչ չի ասում), որ հայերենի բազում բարբառներ, ինչպես և դրական արևմտահայերենը ժամանակակից արևելահայ գրական լեզվի համեմատությամբ ունեցել են և այժմ էլ ունեն բազմապատկական բայերի ավելի ընդարձակ գործածություն կամ հարաբերականորեն բարձր հաճախականություն, Բարբառային և ժողովրդական-խոսակցական, ինչպես նաև արևմտահայերենի շատ ու շատ բայածների ու առանձին ածանցների (ծևույթների) ներթափանցումը լուսնելահայ դրական լեզվի ոլորտը ավելի հարստացրել ու բազմազան է դարձրել կրկնվող գործողության կամ եղելության իմաստային մանրամասների բնութագրումը, այնպես որ այժմ խոսք կարող է լինել միայն միջոցների ու իմաստերանդների ընդլայնման և մեզ հետաքրքրող քերականական կարգի բավարար ակտիվության մասին։ Եվ, վերջապես, գրաբարի ու ժամանակակից դրական հայերենի բազմապատկական բայատիպարների վիճակագրական ուսումնասիրության արդյունքները հաստատապես վկայում են, որ բազմապատկության քերականական կարգի նման բնութագրումը պայմանավորված չէ լեզվական փաստերի իրական վիճակով։

¹¹ Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 132—133։

¹² Նույն տեսակետն է պաշտպանում նաև Ս. Կ. Զարբեջյանը (տե՛ս «Լեզվի և ոճի հարցեր», հատ. 2, Երևան, 1964, էջ 296—298)։